

ՆԱՐԵԿԱՅՈՒ ՍՆՐԱՆԵՐ

Ս. Ա. ԶԱԶԱՐՅԱՆ

Նարեկացու կույս հոգին միայն
կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց
քրիստոնեության բանաստեղծությունը:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Որքան խորը և նորբ է զգացել ու ըմբռնել Նարեկացուն Խրիմյան Հայրիկը: Մի անպահույճ, բայց խորիմաստ նախադասությամբ նա արտահայտել է այնպիսի ընդհանրացնող միտք, որը, ըստ իս, Նարեկացուն, նրա կենսափիլիսոփայությունը հասկանալու բանալին է: Իսկապես, միայն Նարեկացին «կրցավ հասկանալ Քրիստոսին» և այդ պատճառով կարողացավ տալ «քրիստոնեության բանաստեղծությունը»: Ի՞նչ է նշանակում Հայրիկի այն միտքը, թե միայն Նարեկացին «կրցավ հասկանալ Քրիստոսին»: Մի՞թե հազար տարվա պատմություն ունեցող քրիստոնեության մեջ ուրիշները չէին հասկացել Քրիստոսին: Անշուշտ, մինչև Նարեկացին շատերն էին հասկացել, շատերն էին լավագույն ձևով ըմբռնել և մեկնաբանել Քրիստոսի վարդապետությունը, շատերն էին տառապել ու նահատակվել ի սեր Քրիստոսի և այլն: Սակայն Նարեկացին այն եզակիներից էր, որ համարձակություն ունեցավ իր մեջ բնակեցնելու Քրիստոսին՝ մարդկության Մեծ Փրկչին, միայն նա խիզախեց Քրիստոսի պես պատարագվելու հանուն մարդկության փրկության: Նա դարձավ երկրային Քրիստոս՝ բայց ոչ թե ժխտելու կամ ստվերելու Քրիստոս Աստծու Գործը, այլ փառաբանելու և մեծարելու Նրան, իր համեստ նպաստը բերելու Նրա սկսած մեծագույն Գործին:

Քրիստոսի Գործը մարդկության փրկությունն է: Աստծու Որդին մարդեղացավ, խաչվեց՝ զոհաբերեց Իրեն, որպեսզի մարդկանց ցույց տա փրկության կենարար ուղին: Բայց արդյոք հասկացա՞նք մարդիկ Քրիստոսին, կարողացան հասու լինել այդ սխրանքի խորհրդին: Քրիստոսի խաչելությունից արդեն անցել էր շուրջ հազար տարի. այդ ընթացքում փոխվե՞լ են արդյոք մարդիկ, փոխվե՞լ են նրանց մտածելակերպը և գործելակերպը, ջանացե՞լ են նրանք նմանվել կամ հետևել իրենց Տիրոջը: Լրացել էր Քրիստոսի ծննդյան հազարամյակը, և, ինչպես այդ ժամանակ ենթադրում էին շատ քրիստոնյաներ, մոտենում էր Ահեղ Դատաստանի Օրը: Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» մեջ զգացվում է այդ մտայնության շունչը. «Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման, // Ուժգինս հնչեցեալ ի ձորն վրէժնորոթեան», կամ՝ «Մերձ է ար տեառն», երբ արդարության ժամադրավայր Հովաթափի նեղանձով հովտում և կեղոռնի հեղեղատի ափին՝ երկրային կյանքի օրինակներով հանդերձյալները պիտի պատկերվեն: Մոտ է ժամը հաշվետվության և հատուցման, բայց «ի՞նչ, ի՞նչ երեսով պիտի հանդգնի» մարդը ներկայանալ այդ մեծ Դատաստանին: Պատրաստ է արդյո՞ք մարդկությունը Ահեղ Դատաստանին, Քրիստոսից հետո ձրգտե՞լ են արդյոք մարդիկ թոթափելու իրենց մեղքերը, մաքրվելու, նորոգվելու,

* Տե՛ս Ավ. Իսահակյան, Երկեր, Եր., 1987, էջ 717:

՝ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատասիրութեամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 247 (այսուհետև այս հրատարակությունը հղելու ենք տեքստում փակագծերի մեջ մշելով միայն էջաճամարը):

հոգեպես կատարելագործվելու, ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելու, աստվածամարդ դառնալու: Չէ՞ որ «պատերազմի օրն այդ ահարկու» ո՛չ պաշտպանվելու միջոց կա, ո՛չ խոսքով արդարանալու, ո՛չ կեղծելու, ո՛չ խաբելու, ո՛չ կմկմալով ստախոսելու, ո՛չ ճողոպրելու ու ծլկելու, ո՛չ էլ թաքցնելու: Այդ օրը ինքնարդարացման մարդկային բոլոր հնարները իզուր են լինելու. Աստված ամենատես է, ամենագետ, հետևաբար՝ արդարացի, և անողոք Դատաստանից ոչ ոք չի կարող խույս տալ:

Ավա՛ղ, իրականությունն այն էր, որ նախնական մեղքով ապականված մարդը շարունակում էր թաղվել նորանոր զագրելի մեղքերի մեջ՝ բոլորովին մոռացած Քրիստոսի չարչարանքների, Աստծու Որդու խաչելության, մարդու առաքելության և պատասխանատվության մասին: Ավելի՛ն, ինչպես նկատում է Նարեկացին, մարդը «դեմքի փոխարեն թիկունք է դարձրել» Աստծուն:

Նարեկացու ապրած ժամանակաշրջանը ճգնաժամային, բարդ, հակասական, մարդկային կյանքի բեկումնային մի շրջան էր, երբ հասարակության մեջ նախ՝ ավանդական որոշ արժեքներ բացահայտորեն կամ ծածուկ քննադատում-մերժվում էին, իսկ նորերը չէին ընդունվում կամ դժվարությամբ էին ընկալվում, երկրորդ՝ պատմական հանգամանքների բերումով իրար էին խառնվել տարասեռ (քրիստոնեական, հերետիկոսական, աղանդավորական, հեթանոսական, մուսուլմանական) կրոնաբարոյական արժեքներ ու ավանդույթներ: Երկրում, չնայած հաստատված խաղաղությանը, ստեղծվել էր հոգևոր անկայուն և խառնաշփոթ իրավիճակ: Այլադավանները՝ հեթանոսները և մուսուլմանները, ասպատակում էին երկիրը, քրիստոնյա ազգերը պատերազմում էին իրար դեմ, թափում միմյանց արյունը, քույր եկեղեցիները «հաշիվներ էին մաքրում» իրար հետ՝ խճճվելով անպտուղ դավանաբանական վեճերի մեջ, որոնք, ըստ էության, ոչ մի կապ չունեին Քրիստոսի վարդապետության հետ: Մարդիկ օտարվել էին Աստծուց, նույնիսկ կորցրել իրենց հավատը: Ինչպես այդ ժամանակների մասին գրում է պատմիչ Արիստակես Լաստիվերցի, արծաթասիրությունն ավելի հարգի էր, քան աստվածասիրությունը, և մամոնան ավելի, քան Քրիստոսը²: Կենարար հավատն իր տեղը զիջել էր ձևական, հետևաբար՝ խախտտ, անիմաստ, «անհավատ» հավատին: Սիրտն ու բանականությունը, խիղճն ու միտքն օտարվել-հեռացել էին իրարից: Սիրտը գրավի դրած մարդը երկփեղկվել էր, դարձել երկդեմի: Ինչպես Բանաստեղծն է խոստովանում՝ «Բերանովս՝ մերձ առ ստացողն, եւ հեռի՝ երկկամամբք, // Ծրթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիս» (էջ 354): Մարդիկ ոչ միայն կորցրել էին իրենց աստվածային պատկերը, ոչ միայն հեռացել-օտարվել Աստծուց, այլև սկսել էին հեզմել Քրիստոսի երախտիքները: Քրիստոնեական Եկեղեցին, որը պետք է միջնորդի դեր կատարեր Աստծու և մարդու հարաբերությունում, մարդու փրկության գործում, ավելի մեծ ուշադրություն էր դարձնում հավատքի արտաքին, քան ներքին կողմին, ավելի շատ զբաղվում էր աշխարհիկ, քան հոգևոր գործերով: Ավելի՛ն, որոշ կրոնավորներ, Ֆ. Դոստոևսկու բառերով ասած, «ինքնաբավական մի վստահությամբ, մոռացած սահմանն էության մարդու», փորձում էին սրբագրել Քրիստոսի սխրագործությունը: Մարդու բարոյական ու հոգևոր անկման բոլոր նշանները առկա էին. մարդը ճգնաժամի մեջ էր, հայտնվել էր փակուղում, մոլորվել ինքնագործունեության արհրիմթոսում, զրկվել բարոյական կողմնորոշիչներից, չուներ այլևս «գնալու տեղ»:

Մարդկանց սաստելու, զգաստացնելու ու նորեն դարձի բերելու համար անհրաժեշտ էր մի նոր զոհաբերություն: Այլևս միայն մարդկային զոհաբերություն, որ պիտի նշանավորվեր նորացված, թարմացված հավատքի հոչակմամբ՝ իր անձնուրաց «փրկիչով», որը մեծ ճակատամարտ պիտի տար մարդկության փրկության համար: Մարդը դեմքով պիտի շրջվի առ Աստված, դեմ հանդիման կանգնի

² Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, 1971, Եր., էջ 47:

Աստծու առաջ: Մարդը նորեն պիտի դարձի գա և արդարացնի Քրիստոսի զոհաբերությունը:

Բայց ո՞վ պետք է հնչեցնի ահազանգը, ո՞վ պետք է աստվածային ճշմարտությունից շեղվածներին և առաքինությունից մոլորվածներին ցույց տա փրկության ուղին: Թվում է՝ Աստված լքել է երախտամոռ մարդկանց, նրանց թողել բախտի քմահաճույքին, հոգնել բարեբարելուց, հրաժարվել մարդասիրելուց: Ո՞վ պետք է միջնորդի Աստծուն, ո՞վ պետք է հաշտեցնի և ինչպե՞ս պետք է հաշտեցնի մարդկանց և Քրիստոսին:

Այդ տիեզերական համամարդկային բեռն իր ուսերին է վերցնում Գրիգոր Նարեկացին՝ միջնադարի քրիստոնեական աշխարհի մեծագույն մարդկանցից մեկը, համամարդկային էությունը պարուրված հայոց ոգու, հայոց բնագանգական ու կրոնական ձգտումների գեղարվեստական արտահայտիչը: Նարեկացու «Մատյանը» հայ հավատացյալ ոգու կտակարանն է, հայոց արդարամիտ, խոռվահույզ և ինքնաքննադատ ոգու համամարդկային չափերի հասնող պոթովման մարմնացումը: Պատահական չէ, որ «Մատյանը» հայ ժողովուրդը ընկալել է որպես սուրբ գիրք: Նշանավոր գրականագետ Արշակ Չոպանյանի դիպուկ արտահայտությամբ՝ «ոչ մեկ կրոնական գիրք մեր մեջ այնչափ կարևորություն ստացած է, որչափ «Նարեկ»-ը. մեր ժողովուրդը Ավետարանին քով, պիտի համարձակիմ ըսել՝ անկից առաջ դրած է զայն. իր աղոթքի գերագույն գիրքը նկատած է զայն, «հայ» աղոթքին նվիրական գիրքը»¹: Հայը ընկալել է «Մատյանի» խորհուրդը, որովհետև գիտակցաբար թե ենթագիտակցաբար նրանում տեսել է իր էության, իր աշխարհատեսության, մտածողության և զգացողության դրսևորումները:

Նարեկացին ինքնակամ զոհաբերում է իրեն, սակայն այդ զոհաբերությունը, ի տարբերություն Քրիստոսի, «անարյուն, բանական» զոհաբերություն էր: Մեծ մարդը, գրում է Հեգելը, նկատի ունենալով հույն փիլիսոփա Սոկրատեսի ողբերգությունը, ուզում է լինել մեղավոր և իր վրա վերցնել մեծ բախումը: Այդպես Քրիստոսը զոհաբերեց իր անձը, բայց նրա ստեղծած գործը մնաց: Նարեկացին նույնպես զոհաբերում է իր անձը, իր վրա վերցնում հանուր մարդկության բոլոր մեղքերը, որպեսզի «կենդանի մեղայիններին» ցույց տա փրկության կենարար ուղին: «Եթե մեկը բոլորի փոխարեն մեռաւ, ապա ուրեմն բոլորը մեռած էին. եւ մեռաւ բոլորի համար...» (Բ. Կորնթ. Ե, 15-16):

Բայց որչափ դժվար է մարդկության «աղոթանվեր պատգամավորի», Աստծու և մարդկանց միջև «հաշտարարի» դեր ստանձնելը, նույնչափ ահավոր է այդ մասին բարբառելը, առավել ևս պարզապես խելահեղություն է ավանդել «փրկչական» խոստովանությունը, ավետել նոր հավատքը, մեն-միայնակ «դատի» մեջ ընկնել Ամենաբարձյալի հետ: Նարեկը սկսվում է հեղինակի այս հոգեվիճակի պատկերմամբ. ինչպե՞ս կարող է «Երուսաղեմի վերջին ավերման կերպարանք» ունեցող, երբևիցե գործված հանցանքներից առավելագույն հանցանքներ ունեցող մեղապարտ մարդը դեմ առ դեմ կանգնել Աստծու առջև:

Նոր հանդուճակ ձեռնարկի համար հարկավոր էր «թուլլովություն» ստանալ: Ուստի, Աստծուն ուղղված առաջին աղերսը, որով բացվում է Նարեկը, նորահայտ փրկության մատյանի, ձեռնարկած անհավատալի, բայց անհրաժեշտ գործի համար Աստծուց բարեհաճություն ստանալն է: Նարեկացին ողբաձայն աղաչում է, որ Աստված ընդունի իր անարյուն, բանական զոհաբերությունը՝ այն չչփոթելով թանձրաբարդ ծխով մատուցվող բոլորանվեր պատարագի հետ, որ բարեհաճությամբ և ոչ թե բարկությամբ ընդունի «կարճատոտ ու սեղմ խոսքերի» հյուսվածքը, հենց սկզբից հայտնի իր բարեգութ կամքը՝ «Մատյանն» իր ավարտին հասցնելու համար: Ավելին, հարկավոր է նաև, որ Մատյանը լինի աստվածաշունչ, աստվածային ներգործող շունչը միախառնվի մարդու բանաստեղծական ձիրքին:

¹ Ա. Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 300:

Կասկածը տանջում է բանաստեղծին. արդյո՞ք ինքը բարոյական իրավունք ունի, «Կենդանի մեռյալ» լինելով հանդերձ, դիմել Աստծուն, արդյո՞ք Աստված կլսի իրեն, արդյո՞ք կհասկանա իրեն, արդյո՞ք անվաստակ չի թողնի իրեն: Այդ կասկածանքը ինչ-որ իմաստով վերածվում է «աղերս-սպառնալիքի».

Մի՛ լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,
Ողբալ, եւ ոչ արտասուել,
Խորհել, եւ ոչ հառաչել,
Ամպել, եւ ոչ անձրեւել,
Ընթանալ, եւ ոչ հասանել,
Ինձ ձայնել, եւ քեզ ոչ լսել,
Պաղատիլ, եւ անտես մնալ ... (էջ 252):

Սակայն բանաստեղծի կասկածանքը՝ որպէս մահկանացու մարդուն բնորոշ բնազանցական անհանգստության արդյունք, շուտով փոխվում է լավատեսության, որովհետև նա չի կարող կասկածել Աստծու մարդասիրությանը, գթասրբությունը և ողորմածությանը: Նա այլևս Աստծուց չի պահանջում զոհաբերություն, այլ ընդամենը ողորմություն: Հիշելով առաքյալների, անառակ որդու, պողոնի կնոջ, չարագործի նկատմամբ Քրիստոսի ցուցաբերած ներողամտությունն ու ողորմածությունը՝ բանաստեղծը գոտեպնդվում է հույսով, հավատով, որ այս անգամ ևս Քրիստոսը չպիտի այլալի մարդասիրելուց և փրկություն պարգևելուց: Վստահ Քրիստոսի բարեգթությանը՝ Նարեկացին իր «Մատյանը», որպէս «ըջ-մարտացի մի պատվեր, ավանդ», իբրև փրկության կենաց գիրք, հանձնարարում է «այս երկրի վրա հաստատված բոլոր բանականներին, համայնատարած քրիստոնյաների տիեզերագումար ամբողջ բազմությանը», արդարներին և մեղավորներին, հպատակներին և իշխանավորներին, բարեգործներին և չարամիտներին, տղամարդկանց և կանանց, եկեղեցականներին և աշխարհականներին: Նա հանձնարարում է բոլորին, որովհետև «Մատյանը» դիտում է որպէս փրկության Գիրք, Կենաց դեղ, մարմնական ու հոգևոր վերքերի բուժման, մաքրագործման ու կատարելագործման, Աստծու հետ միավորվելու գորավոր միջոց: Այդ Գիրքն ավետում է ոչ թե մեկի, այլ բոլորի փրկությունը, որովհետև, թեև Գիրքը գրվել է մեկի կողմից, սակայն բոլորի համար է:

Նարեկացին իր «Մատյանը» ամանեցնում է Քրիստոսի Ավետարանին, որը «կյանք է բացարձակ», քանի որ խոստանում է մեղքերին դարձ, պարտքերին՝ զիջում, եղծմանը՝ նորոգում, վերքերին՝ բուժում, մահվան փոխարեն՝ կյանքի փրկություն: Նարեկը նույնպէս «կենաց գիրք» է, որին հաղորդակիցները պիտի արժանի դառնան փրկության, հոգեկան մահաբեր ցավով տառապողները, աղոթելով այս գրքով, կստանան «կյանքի հույս», հանգստություն ու խաղաղություն: Մատյանը կտակարան է, որն ավետում է փրկություն, հույս, լույս, ընդամենը՝ ոչ թե ընտրյալների, այլ բոլորի համար:

Գիտակցելով իր ձեռնարկած գործի կարևորությունն ու նշանակությունը՝ Նարեկացին Աստծուն խնդրում է ոչ միայն բարեհաճությամբ ընդունել իր Մատյանը, այլև այն դասել ընտիր գրքերի շարքը, դարձնել համայն քրիստոնյաների համար սուրբ գիրք:

Նարեկացին «Մատյանը»՝ որպէս «խոստովանական կտակ», հանձնարարում, հասցեագրում է բոլոր բանական էակներին: Դա նշանակում է, որ նա նոր ասելիք ունի և նոր ճանապարհ է մտնացույց անում, մարդկանց փրկելու նոր գաղափար և նոր ուղի է առաջարկում: Ո՞րն է նրա առաջարկի իմաստն ու էությունը, ո՞րն է «Մատյանի» գաղափարական բովանդակության հիմնակետը:

Նարեկացու «Մատյանի» գլխավոր գաղափարը մարդու փրկությունն է: Իսկ փրկվելու համար նա առաջադրում է երկու նախադրյալ՝ աղոթքի միջոցով մեղքե-

րի խոստովանություն, զղջում, մեղանչում, ապաշխարություն և աներկբա հավատ առ Քրիստոս: Ըստ այդմ՝ «Մատյանի» գրեթե բոլոր հաները ունեն հետևյալ կառուցվածքը. ա) Աստծու փառաբանում, բ) խոստովանություն՝ մեղքերի թվարկում, ինքնադատապարտում և զղջում, գ) ողորմության հայցում՝ հավատ, որ Քրիստոսը միայն կարող է մահվան մատնվածին փրկել: Գրեթե յուրաքանչյուր հան սկսվում է Աստծո մեծարանքով, այնուհետև Նարեկացին ներկայացնում է իր (մարդու) մեղքերը, կատարած հանցանքները, իսկ վերջում պաղատում է, հայցում փրկություն՝ հավատալով, որ Աստված կարող է դա անել:

Չղջումն ու հավատը սերտորեն կապված են իրար հետ: Ինքնին զղջումն ու մեղանչումը կդառնան անիմաստ, եթե չլինի հավատ, որով պիտի մարդիկ փրկվեն: Բանաստեղծի կարծիքով «թե՛ զղջումն ուժգին, թե՛ մեղանչումը անասնձ, մոլազար» հավասարապես կորստաբեր են, որովհետև երկուսն էլ մարդուն մղում, հասցնում են նույն վիստություն: Նույն միտքը նա գրել էր «Երգ երգոցի» մեկնության մեջ. «Եթե մեկն իր գործած մեղքերի համար սուգի մեջ լինի, չափից ավելի չսգա, որպեսզի հուսահատության չմատնվի և չսսի, թե փրկություն չկա: ... ամեն բանի մեջ պետք է չափավոր լինել»⁴: Ուստի, զղջման ու մեղանչման հետ հարկավոր է զորացուցիչ և կազդորիչ դեղ՝ հավատ, հավատ առ այն, որ հնարավոր է Քրիստոսի օգնությամբ փրկվել:

Չղջման ու մեղանչման իրականացման լավագույն և կանոնական ձևը աղոթքն է: Աղոթքը մարդուն հնարավորություն է տալիս առանց միջնորդի անմիջականորեն հաղորդակցվել Աստծու հետ: Մեծ է աղոթքի դերը հավատացյալի կյանքում: Քրիստոնեական մարդաբանության համաձայն՝ Աստված մարդուն ստեղծել է որպես հոգու և մարմնի միասնություն, երկու հակադիր բնությունների կատարյալ ու ներդաշնակ ամբողջություն: Սակայն մեղսագործությամբ խախտվում է այդ աստվածաիմ ներդաշնակությունը. մարդու մեջ մարմինն ու հոգին վերածվում են երկու ներհակ, հակամարտող սկիզբների: Մարդը հայտնվում է անելանելի, ողբերգական կացության մեջ. հոգին ձգտում է նրան տանել դեպի աստվածային աշխարհը, իր նախնին «տունը», իսկ մարմինը՝ դեպի նյութական, երկրային աշխարհը: Մարդը տռչողովում է այս երկու հակադիր սկիզբների անվերջանալի պայքարից, որոնք «թեև հարազատ, բայց անհաշտելի ոսոխների պես դավաճանաբար ջարդում են իրար»:

Եվ որպեսզի մարդը վերգտնի իր հոգեկան հանգստությունն ու խաղաղությունը, պետք է մշտապես դիմի աղոթքի: Աղոթքը հոգևոր նորոգության ճիգ է և պիտի ուղեկցվի «երկիւղով, զղջմամբ, հոգեւորի անձկութեամբ եւ անմոռնչ հեծութեան մեջ յանցանքները պատմելով»⁵: Աղոթքի վերաբերյալ մի ամբողջական տեսություն էր մշակել Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձևացին, որը, ինչպես հայտնի է, բանադրանքի է ենթարկվել եկեղեցու կողմից: «Աղօթքն ամբութեան պարիսպ է,- գրում է նա,- հաստատութեան սին, հաւատքի հիմք, յոյսի խարիսխ, առ Աստուած ելնելու սանդուղք: Աղօթքը պարծանքների պսակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող...: Եւ ի՞նչ եւս ներբողեմ աղօթքի արդիւնատրութեանը, քանզի հրեշտակներին դասակից է դարձնում, սուրբերին՝ քաղաքակից եւ սերովբէներին՝ կանառակից: Մարդուն դարձնում է Աստուծոյ տաճար եւ Երրորդութեան օթեան»⁶: Այսպիսով, աղոթքը այն կարճ ճանապարհն է, որը մարդուն

⁴ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն «Երգ երգոցի» Սողոմոնի, «Աստղիկ», թիվ 4, 1991, էջ 29:

⁵ Սուրբ Նեղոս Սինայեցի, Աղօթքի մասին, «Գանձասար», Ա, 1992, էջ 184:

⁶ «Աստուծոյ կամքն ու երկիւղը ճշմարտութեան ծանուցող սուրբ հոգեկիր վարդապետ Խոսրովի յոյժ օգտակար եւ հոգեշահ խրատական պատգամները», «Գանձասար», Բ, 1992, էջ 166, 164 (այսուհետև՝ Խոսրով Անձևացի, Աշվ. աշխ. և էջը):

մերձեցնում է Աստծուն, մարդուն դարձնում Աստծու տաճար, մարդուն պարզևում հոգեկան հանգստություն, դառնում փրկության պատճառ: Նարեկը կոչվում է նաև Աղոթամատյան, աղոթքների մի անբավ շտեմարան է, որով մարդը պիտի ստանա «կյանքի հույս ու փրկություն», որով անգամ անքավելի մեղանշումներից կործանվածը կարող է ելնել դեպի աստվածային լույսը: Աղոթքը հնարավորություն է տալիս մարդուն՝ անկեղծորեն մեղանշելու և զղջալու, Աստծու առաջ բացելու իր սիրտը:

Սակայն, որքան էլ կարևոր լինի աղոթքը, այնուհանդերձ, մարդու փրկության գլխավոր գեները հավատն է: Հավատով է միայն հնարավոր փրկություն: Բայց ինչպիսի՞ հավատով: Ահա այստեղ է, որ Նարեկացին, հակադրվելով իր ժամանակում հավատի մասին տարածված ըմբռնմանը կամ հավատի նկատմամբ եղած վերաբերմունքին, առաջարկում է ճշմարիտ, անկեղծ, մաքուր, ի խորոց սրտի հավատի տեսություն: «Մատյանի» սկզբնամասում նա հայտարարում է. «Եվ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց // Ջհավատոցն շինուած կառուցից» (էջ 282): Ըստ նրա տեսության՝ ձևական, արտաքին, կեղծավոր հավատի փոխարեն մարդ պետք է ունենա ճշմարիտ, ազնիվ, հոգեփոխող, ապրեցնող հավատ, որը որևէ արտաքին հեմարանի, նույնիսկ Գրքերի կարիք չպետք է ունենա: Այս կապակցությամբ Նարեկացին «Երգ երգոցի» մեկնությունում մեջբերում է Հովհանն Ոսկերեբունի խոսքը. «մենք պետք է այնպիսի սրբակրոն վարք ունենայինք, որ գրքի կարիք չուենայինք. ինչպես՝ Նոյը և Աբրահամը և նրանց որդիներն ու թոռները, ինչպես Հոբը և Մովսեսը, և առաքյալները, որոնց սրտի մեջ էր բնակվում, գրի փոխարեն սրտի տախտակների մեջ էր գրում և ոչ թե գրքերի»⁷:

Իր ժամանակի մարդուն համակած ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկը, ըստ Նարեկացու, «անհավատ» հավատն է: «Հավատի սովը» ի վիճակի է տակնուվրա անելու մարդկային կյանքը: Գաղափարախոսությունները և կրոնները հայտնվում են ճգնաժամի մեջ նախ և առաջ այն պատճառով, որ դրանց տեսաբանները քարոզում են մի բան, սակայն կյանքում անում են բոլորովին այլ բան, ավելին, ապրում են այն բարքերով, որոնք տեսականորեն մերժվում և դատապարտվում են իրենց իսկ կողմից: Այս իրավիճակում է, որ հայտնվում է Մ'եծ հավատաքննիչը կամ մարդկության մեծ դատախարակը, բոլոր ժողովուրդների հայրը, որին թվում է, թե ինքը մեկընդմիջտ հայտնագործել է մարդկանց երջանկացնելու ճշմարիտ բանաձևը: Բնականաբար, նա ոչ միայն չի կարող հասկանալ այն մարդկանց, ովքեր չեն ընդունում այդ բանաձևի բացարձակ ճշմարտությունը, այլև չի կարող հանդուրժել նրանց ֆիզիկական ու բարոյական գոյությունը:

Հավատքի համար չկա ավելի կործանարար բան, երբ ցույց են տալիս, թե հավատում են, բայց շարունակում են ապրել անհավատի կյանքով: «Անհավատ» հավատացյալը Աստծուն երկրպագում է՝ ակնկալելով Նրանից պարգևներ, երկրային բարիքներ: Մարդը անգամ մտածում է, որ ինքը կարող է Աստծուն չհավատալով փրկել մարդկանց: «Մատյանում» Նարեկացին մի քանի անգամ արտահայտում է այն միտքը, թե մարդկանց գործերը ուզում են գերազանցել աստվածայինին: Փաստորեն, Նարեկացին, հետևելով Նարեկա վանքում ձևավորված ավանդույթին, քննադատում է ինչպես եկեղեցական դոգմատիկ հավատքը, որում մեծ տեղ է տրվում հավատքի արտաքին նշաններին, այնպես էլ աղանդավոր թոնդրակեցիների մարդապաշտական հավատքը, ըստ որի՝ փրկությունը կարող են իրականացնել հենց իրենք՝ մարդիկ, իրենց ուժերով: Նարեկացու համար հավասարապես անընդունելի են ինչպես կեղծ հավատացյալները, որոնք սրտով ու հոգով կապված չեն Աստծու հետ, այնպես էլ աղանդավոր հավատացյալները, որոնք անճանաչելիորեն վերափոխում են Քրիստոսի վարդապետությունը: Սակայն

⁷ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն «Երգ երգոցի» Սողոմոնի, էջ 5:

Նարեկացու մեծությունը ոչ թե այն է, որ նա քննադատում է թե՛ եկեղեցականներին և թե՛ աղանդավորներին, այլ որ, վեր կանգնելով նրանցից, փորձում է համամարդկային մի նոր մակարդակում «հաշտեցնել» հակամարտ կողմերին:

Բնականաբար, այդ մոտեցումը անհասկանալի պիտի լիներ հակամարտող կողմերի համար: Նարեկացին չի մերժում եկեղեցին, սակայն չի ընդունում և քննադատում է քրիստոնեական հավատքի հանդեպ որոշ եկեղեցականների անհոգ, անտարբեր, շահապաշտական վերաբերմունքը, որի բնական հետևանքը պետք է լիներ աղանդավորական շարժումների աշխուժացումը: Այդ շարժումներն ուղղված էին եկեղեցու դեմ, ավելի ճիշտ, գուցե սկզբնական շրջանում, քրիստոնեական հավատքը «մեղցնող» եկեղեցականների դեմ: Այս հարցում նա հետևում էր իր հոր դիրքորոշմանը. «Լսէ՛ք, հովիւներ, լսէ՛ք եւ երկնչէ՛ք եւ առաւել՝ զարհուրէք եւ ողբացէ՛ք ահ ու դողով: Քանզի հովիւ կոչուեցիք ոչ թէ որպէսզի ձեր անձերն արածեցնէք եւ ջորիներով ու աչքի ընկնող երիվարներով շրջէք աշխարհում եւ մարմնական փառքով ճոխանաք ու յիմարաբար մեղկանաք զգեստներով, այլ՝ որպէսզի Տիրոջ ժողովուրդը հովուէք, բանաւոր խաշներն արածեցնէք... որպէսզի միշտ խօսքով վարդապետէք եւ նոյնը գործով կատարէք՝ (սեփական) անձի մաքրութեամբ բոլոր բարիքների օրինակը տալով հոտին եւ բարի նախանձով յորդորելով բոլորին... Եւ, որ պարտաւոր էիք բարի օրինակ լինել, գայթակղութեան պատճառ էք լինում եւ կործանում ձեր անձերն ու ձեր ձեռքի տակ գտնուողներին: Եվ ով անհոգ է իր անձի կորստեան հանդեպ, ինչպէ՞ս կարող է հոգ տանել այլոց փրկութեան համար»:

Նարեկացին, Ս. Ավերիցնի բառերով ասած, միաժամանակ «լավ հասկանում էր այն մարդկանց զգացմունքները, ովքեր ճշմարտություն էին որոնում»: Իսկ այդ «հասկացումը», ինչ-որ իմաստով ներքին համակրանքը, չէր կարող ձևապաշտ եկեղեցականների սրտով լինել: Չնայած դրան՝ նա հանդես է գալիս աղանդավորների դեմ, քննադատում նրանց ուսմունքի ուղղափառ քրիստոնեությունից շեղված գաղափարները: Ներքին խոտվությունը պլեկոծում է նրա ներաշխարհը: Մի կողմից որոշ եկեղեցականներ կամեանում էին դատապարտել Նարեկացուն (դրա վկայություններն են Նարեկացու մասին տարածված ժողովրդական լեգենդները և վիպական երգերը), սակայն չէին կարող, որովհետև, ըստ էության, Նարեկացին հակաքրիստոնեական և հակաեղեցական որևէ գաղափար չէր պաշտպանում: Ավելին, որպես հավատքի պաշտպան՝ նա խիստ մտահոգված էր եկեղեցու՝ իբրև Աստծու տաճարի մաքրությամբ ու անաղարտությամբ, քան իրեն հետապնդող «եկեղեցու փառքը սափրել» ցանկացող եկեղեցականները: Մյուս կողմից՝ աղանդավորները (թոնդրակեցիները), որոնք, մերժելով Քրիստոսի աստվածային բնույթը, իրենց գլխավորին անվանում էին քրիստոս, կուզենային Նարեկացին լինել իրենց առաջնորդներից մեկը: Սակայն, որքան էլ Նարեկացին հասկանար նրանց «տանջող ցավը», այնուհանդերձ չէր կարող ընդունել նրանց վարքագծի և դավանանքի դրսևորման ձևերը: Հետաքրքիր է, որ Նարեկացին «Մատյանում» ակնարկում է, որ աղանդավորները իրեն անվանում էին քրիստոս.

Եւ արդ, յիշեա՛ զնոսա կրկին ընդ միոյ,
Որ ի քո անուն բարձրացեալ զանարժանս՝ զիս ընկալան,
Ու տո՛ւր նոցա, տէր ամէնառատ, բարեբար ու անոխակալ,
Վարձս արդարոյ եւ մարգարէի:
Թէ եւ ես յաւէտ թափոյր իցեմ յարժանեաց,
Ըստ հաւատոց նոցա եւ առ յոյս նոցին ակնկալութեան
Որ առ պարտաւոր գերիք ողջամիտ կամաւք ակնարկեմ,
Որպէս թէ ի մասանցոյ քո կեցուցչաց
Ի պահպանարան հոգւոյս ծածկութի լիով ունիցիմ (էջ 585):

¹ Խոսքով Անձնացի, Աշվ. աշխ., էջ 161-162:

«Հավատի շենքի» կառուցման հիմքը ճշմարիտ հավատն է, որն ամենագոր է և ամենակարող: Տերն ինքն ասում է՝ «Ով հավատում է, հնարավոր է նրան ամեն բան»: Կամ՝ «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ով հավատում է ինձ, ինքն էլ կանի այն գործերը, որ ես եմ անում, եւ դրանից աւելի մեծերը կանի» (Յովհ. ԺԴ, 12): Աստվածահաճո բարեմասնությունների չափն ու արժեքը որոշելիս, գրում է Նարեկացին, «միշտ հավատը պիտի գտնենք ամենից բարձր ու գերազանց», որովհետև նրանով կարելի է լույս մերձենալ բոլոր սրբություններին: Աստված մարդկանցից պահանջում է անասան հավատ. առանց հավատի Նա անգամ չհաճեց ցույց տալ իր հրաշագործ զորությունը: Եթե մանանեխի մի փոքրիկ սերմնահատի չափ հավատը կարող է «ծովի խորքը փոխադրել մեծամեծ լեռներ», ապա այն պետք է ընդունենք «որպես ուղեցույց առաջնորդ կյանքի» և «Աստծո աներկմիտ երկրպագության»: Հավատը, լինելով Տիրոջն առընթեր, ունի «ինքնիշխանորեն կյանք ընձենելու» զորություն: Հավատը գերազանց և առավել է բանակահանությունից, որովհետև միայն վերջինիս միջոցով հնարավոր չէ հասնել և ճանաչել Աստծուն: Նարեկացու համոզմամբ, հավատքը պետք է ներառի մարդկային իմացության մյուս ունակությունները, դրանք ընդգրկի իր մեջ, քանզի «սեռն տեսութիւն, // Եւ կատարեալ իմաստութիւն, // Եւ առ աստուած ընտանութիւն, // Եվ բարձրելոյն ծանաթութիւն, // Հաւատոց մասն երջանիկ եւ ընտրեալ անուն...» (էջ 393):

Հավատը, սերը և հույսը փոխկապակցված են իրար, և դրանց շնորհիվ մարդ Աստծով պիտի հավետ ճոխանա, քանի որ «եթե հավատաս Նրան, նաև կսիրես, որով կհուսաս և աներևոյթ իր պարզւններիս»: Հավատքի էությունը, նախ, այն է, որ պետք է հավատալ և հուսալ, որ «Քրիստոս ինչ որ կամենա, կարող է անել», Նրա համար չկա անկարելի: Երկրորդ՝ պետք է հավատալ Քրիստոսին, նրա հարությանը, երրորդ՝ պետք է հավատալ «և այն փոփոխության, որ մեղավորը կարող է դառնալ լիովին քավված, չարագործն՝ արդար, անմաքուրը՝ սուրբ»:

Հավատի շնորհիվ Նարեկացու մարդաբանությունը դառնում է լավատեսական: Ի՞նչ կա, արդարև, գրում է նա, ավելի չքնաղ, խոսքից ու մտքից վեր, քան երկբայության թանձր խավարից Աստծո օգնությամբ մաքրված սիրտն այն մեղավորի, որ թեև խորասուզվել է կործանման վիհի անդունդն անհատակ, բայց, իբրև իր հոգում և մտքում պահած լույսի կայծ, ունի նաև փրկության ճշխար: Ուստի, իսպառ վշտաբեկ մեղավորը կարող է հուսալ՝ «վերստին անդրէն միսանգամ նախապարգեւիցն փառազարդութեանց դարձեալ հասանել», քանի որ Աստծո կամքով է մարդու մեջ այդ կայծն առկայծում: Այդ ներքին հավատը, զգացմունքը, նվիրվածությունը, ի խորոց սրտի Աստծո հետ զրույցը «ավելի մեծ հաճությամբ է հոտոտում Աստված, քան մյուս բոլոր բուրումներն անուշ»:

Այս ներքին անասան հավատը ճշմարիտ քրիստոնեության պատվարն է: Մարդն ինքը պետք է դառնա Աստծո տաճարը և ոչ թե իրենից դուրս փնտրի Աստծուն: Փրկության հարցում մարդուն չեն կարող օգնել մինչևիսկ «մերձավորագույն մարդիկ Աստծո»՝ նահապետները, մարգարեները, առաքյալները, մարտիրոսները. Ուստի, «ընդունայն է ինձ փրկութիւնն առ ի նոցանէ»: Նույնիսկ նրանք, ովքեր «շատ բարձր են թոչում իրենց սուրբ վարքի թևերով», դարձյալ կարող են Աստծո ողորմության: «Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զարութիւն փրկութեան մարդկան, // Եւ ցուցան նոքա ողորմեալք բարեբարիդ եւ զարացեալք ամենակալիդ...» (էջ 525):

Մարդու համար արդեն իսկ կենդանություն է, երբ նա դավանում և օրհնաբանում է կենարար Աստծուն, ընտանի ձայնով կանչում Նրան: Այսպիսի հավատը մարդուն դարձնում է լավատես, վստահություն ներշնչում նրան, որ նա ոչ միայն կարող է քավել իր մեղքերը, մաքրագործվել, այլև նույնիսկ միավորվել Աստծո հետ:

Սակայն մարդը ինքն իրեն, իր ուժերով չի կարող փրկվել: «Մատյանում» մեզ ներկայանում է ապաշխարող, փրկություն հայցող մարդը, այն մարդը, որը իմա-

նալով, որ ինքն առանց Աստծո չի կարող փրկվել, ամբողջությամբ իր հույսը կապում է Քրիստոսի հետ: Այդ մարդը ճշմարիտ քրիստոնյա է, որը ուզում է ապրել քրիստոնյային վայել կյանքով: Ծշմարիտ քրիստոնյայի համար կա ընդամենը մի բացարձակ գոյ, որը Աստված է: Իր կյանքի իմաստը նա տեսնում է Նրա հետ միաձուլման մեջ: «Մատյանի» մարդը բնավ էլ Վերածննդի դարաշրջանի մարդը չէ, որն իրեն զգում է ոչ թե մեղսագործ, Աստծո առաջ ծնկաչոք պաղատող, այլ որպես ինքնավստահ հերոս, երկրային հաճույքներին ձգտող և այդ հաճույքներով ապրող, իր կեցությունը կերտող և իրենով հպարտացող:

Եթե մարդ չի կարող ինքնուրույն փրկվել, ապա կարո՞ղ է արդյոք նա իր փորկություն համար ինչ-որ բան անել: Արդարև, ողբերգական է մարդու վիճակը, բայց մի՞թե մարդը այնքան թույլ է, այնքան ապակամված, անհուսալիորեն կործանված, որ անկարող է որևէ բան անել: Նույնիսկ Օգոստինոս Երանելին, որը «թույլ մարդու» տեսության հեղինակն էր, գրում է՝ «Աստված մեզ ստեղծեց առանց մեզ, բայց չի կարող մեզ փրկել առանց մեզ»: Զե՞ որ Աստված մարդեղացավ այն բանի համար, որպեսզի մարդը դառնա աստված: Դիմելով Քրիստոսին՝ Նարեկացին գրում է՝ «Որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, // Ջի արացես զմեզ վասն քո ըստ քեզ» (էջ 315), կարող ես վերստեղծելով հրաշակերտել մեզ:

Նարեկացու քրիստոնեական հումանիզմի առանցքային գաղափարն այն է, որ այնևս մարդու հերթն է քայլ ձեռնարկելու իր փրկության համար: Առաջին հայացքից կարող է թվալ, թե «Մատյանի» մարդը անելանելիությունից պիտի դառնա կրավորական, միանշեղ խնդիրն առկա կրավորականությունը հաղթահարելն է: Նարեկացու հումանիզմը դրսևորվում է այն բանում, որ նա մարդուն ստիպում է դուրս գալ անտալիքերության, անպատասխանատվության և կրավորականության խրամատներից, նրան մղում ակտիվության, սխրագործության, հորդորում բռնել դեպի աստվածացում տանող ոչ թե «հորիզոնական», այլ ավելի կարճ՝ «ուղղահայաց» ճանապարհը: Յուրաքանչյուրը հույսը պետք է դնի իր վրա, բայց ոչ այն իմաստով, որ ինքը կարող է իրեն փրկել: Առանց Աստծո չի կարող լինել փրկություն, հետևաբար մարդը ո՛չ իր և ո՛չ էլ այլ մարդկանց միջոցով չի կարող փրկվել: Սակայն առանց մեր օգնության, մեր ջանքի ու ճիգի, Աստված չի ցանկանա մեզ փրկել:

Այդ խիզախ քայլը պետք է սկսվի ինքնադիտարկումից ու ինքնավերլուծությունից, սեփական ԵՍ-ի բարոյական դիմագծի անաչառ գնահատումներից, կատարած և մտածելիք մեղքերի անկեղծ խոստովանությունից, անվերապահ զղջումից ու մեղանշումից:

Ծանաչելով մարդու բնության չափն ու զորությունը և ունենալով «Աստծո մերձավորագույն մարդկանց» օրինակը որպես սփոփանք և քաջալերություն, գրում է Նարեկացին, պետք է անմիջականորեն դիմել Աստծուն, Քրիստոսին, որովհետև ըստ մի իմաստունի խոսքի՝ ավելի լավ է «անկանելի ձեռն տեսանել եմ մի՛ ի ձեռն մարդկան», քանզի որպիսին ինքն է զորությամբ, այդպիսին է նաև իր ողորմությունը: Առանց Քրիստոսի կամքի՝ չկա փրկություն: «Ջի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխել, // Եւ եթէ ոչ կամք քո գթացցին, // Ոչ զարեմ փրկիլ մահու պարտականս...» (էջ 459): Միայն լիակատար, ամբողջական և անվերապահ մեղանշումն ու զղջումը կարող են «փափկացնել» Աստծուն, միայն դրանց միջոցով է հնարավոր ակնկալել մեղքերի թողություն: Քանի որ Նարեկացին հանդես է գալիս Աստծուն և մարդկանց հաշտեցնողի դերում, որպես համայն մարդկության պատգամավոր, ուստի նա մի կողմից ներկայացնում է մարդու մեղավորությունը, իսկ մյուս կողմից՝ Աստծուն «հիշեցնում», թե Նա ինչպիսի՞ անբավ զորություններ ունի, ինչպիսի՞ ջերմ մարդասիրական վերաբերմունք ունի մարդկանց նկատմամբ: Հրաշք է, անշուշտ, երբ Աստված չգոյից ստեղծում է գոյը՝ մարդուն, բայց առավել մեծ հրաշք է, երբ վերստեղծում է մարդուն՝ «Քանզի եւ մեծ իսկ է զարութիւն զհնացեալն անդրէն նորոգել» // Ըստ առաջնումն պայծա-

ռութեան, քան յանգոյից ստեղծագործել» (էջ 439): Հենց անելանելի վիճակում Աստված պետք է օգնության հասնի մարդուն.

Այն վայր է այցելութեան,
Յորում ելք հնարից ոչ գոյ,
Այն է քո մեծութիւն,
Յորժամ գյուսահատութեան վերն առողջացուցես,
Այն է հարազատ քում ազգակցութեան,
Եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեսցես փրկութիւն,
Այն է հանդիսարան քում յաղթանակի,
Եթէ զփակեալն մուտս կենաց ի սպառումն շնչոյս բացցես... (էջ 541-542):

Հաղթական է ամեն ինչի դեմ Քրիստոսի մարդասիրությունը: Ի՞նչ են նրա համար մարդու մեղքերը. եթե մարդու համար իր արատները ծանր ու անթվելի են, ապա Քրիստոսի համար՝ «շատ թեթև ու սահմանափակ»: Մարդու հանցանքները քաղելու համար նա պետք չունի ինչ-որ միջոցների, այդ թվում՝ ժամանակի, արագության և տարածության:

«Մատյանում» վերախմաստավորվում է Աստծո և մարդու փոխհարաբերության հարցը: Սրտով և ոչ թե բանականությամբ պետք է մտնենալ Աստծուն: Պետք է սրտի և ոչ թե մտքի իմաստասիրություն: Նա շեշտը դնում է ոչ թե Աստծո ըմբռնման բնագանգական, աստվածաբանական կողմի, այլ էկզիստենցիալ և զգացմունքային-բարոյական կողմի վրա: Աստծո մեծությունը ոչ այնքան համայնի արարչագործության, որքան մարդու հանդէպ գութ ու կարեկցանք ցուցաբերելու մեջ է: Մարդը պիտի սիրի Աստծուն, որովհետև Աստված մարդասեր է: Եթե անգամ մարդը չի սիրում Աստծուն, միևնույն է, Աստված չի կարող մարդուն լքել: Նարեկացին դիտարկում է մարդու նկատմամբ Աստծու էկզիստենցիալ հարաբերությունը (սեր, ողորմածություն, գթասրտություն, ներողամտություն) և մարդու հարաբերությունն առ Աստված (սեր, մեղանչում, զղջում, ապաշխարում, փրկության հույս): Աստծու և մարդու այս անձնական, մտերմիկ էկզիստենցիալ հարաբերության մարմնավորումն է Քրիստոսը: Քրիստոսի միջոցով Հայր Աստված արտահայտեց իր սերը մարդու նկատմամբ, իսկ սերն առ Աստված, Նրա պատգամներին հետևելը մարդու փրկության երաշխիքն են: Քրիստոսը մարդկության փրկիչն է, Աստված, որ մարդէղացավ, ուստի, բնական է, մարդը պետք է պաշտի իր փրկիչին: Քրիստոսը արեց այն, ինչ մինչ այդ չէր արվել: Նա մարդկությանը տվեց Նոր Օրենք, որն սկզբունքորեն տարբերվում է Հինց: Պատահական չէ, որ «Մատյանում» Նարեկացին բազմիցս շեշտում է Հին և Նոր օրենքների միջև եղած տարբերությունը, որպեսզի ցույց տա Քրիստոսի կատարած գործի մեծությունը: Հին Օրենքը «գորավոր էր միայն բռնալիր քարածգությամբ ու անեծքներով դատապարտելու, մահ գործելու մեջ»: Դրա պաշտոնը մեղապարտներին դատապարտելն էր, ուստի դա «մի թույլ միջնորդ էր հաշտարարության և խափանելի մի կտակ երկրային»: Հին նկատմամբ Նոր Օրենքի առավելությունն այն է, որ դա փրկության իրական, աներկբայելի երաշխիք է և հնարավորություն է տալիս մարդուն մաքրագործվելու, դառնալու աստված, միաձուլվելու աստվածային կենաց լույսին.

Եվ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանար,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ
Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ,
Զոր կատարումն երջանիկ խոստման,
Ըստ Պաւղոսի բանին, ոչ ունէր Աւրեան (էջ 453):

Հին Օրենքի նկատմամբ Նոր Օրենքին նախապատվություն տալը նշանակում է, որ Նարեկացին «վախի կրոնի» փոխարեն առաջարկում է «սիրո կրոն»: Նարեկացին դիմում է ոչ թե Հայր Աստծուն, այլ Որդի Աստծուն՝ Քրիստոսին: Քրիստոսը «Մատյանում» ներկայանում է որպես բացարձակ բարոյական իդեալ, որպես մեծագույն մարդասեր, սիրող, զթացող Աստված: Քրիստոսը անոխակալ է, ամենակեցույց, չունի ցատունակից սիրտ, չկա նրա մեջ «նենգության նշմար, մթության նշույլ», Նա ոչ թե ընկածին ոտնահարում, այլ խնամում է, ո՛չ թե տապալում, այլ բարձրացնում է: Թեպետ ապերախտ ու բազմավրեպ երկրածին մարդիկ միայն չարության մեջ փոխհատուցեցին Քրիստոսին, բայց Նա, լինելով լույս և լուսատու, «ամբողջովին փրկագործություն», չի ուզում կորուստ, չի ցանկանում մահ:

Մարդու կեցության նպատակը Քրիստոսին նմանվելն ու Նրա հետ միաձուլվելն է: «Նմանվի՛ր Քրիստոսին»,- պահանջում է Նարեկացին՝ հիշեցնելով, որ Տերը հենց ինքն է մարդկանց ավանդել այս պատվիրանը: «Երգ երգոցի» մեկնության մեջ նա գրում է, թե «նախ պետք է մեղքերի մարմինը մեղցնել, Քրիստոսին մահակից լինել, և անուշահոտ վարքով Քրիստոսի մաքրությանն հավասարվել և ապա միայն հարս լինել և բարձրանալ դեպի Քրիստոս փեսան»⁹: Այն, ինչ արել է Քրիստոսը, մարդը պետք է ձգտի իր հնարավորությունների սահմանում կրկնօրինակել: Քրիստոսը մեր բնության մեր պարզած մարմնով ազատագրության մեծ ավետիսը համբավեց բոլորին և իր աստվածային ձեռքը կարկառելով՝ մահվան դատապարտված մարդուն իր սերունդներով ոտքի կանգնեցրեց:

Մարդու ազատագրության մի նոր ավետիս է բոլոր ազգերին համբավում նաև «Մատյանը»: Նարեկացին, ինչպես նշեցի, «Մատյանը» դիտում է որպես «հավերժական անեղծ հուշարձան», որով մարդիկ կարող են ոտքի կանգնել և հասնել փրկության:

Քրիստոսը ներկայանում է որպես հաշտարար՝ Աստծո և մարդկանց միջև: Եվ քանի որ Նարեկացին նույնպես հանդես է գալիս հաշտարարի դերում, ուստի իրեն նմանեցնում է Քրիստոսին: Իր իսկ խոսքերով ասած՝ «Ջաստուած զգեցողիս ներքոյ եւ արտաքոյ» և «որպէս թէ կամաւ ընդ քեզ եւ կրիցիմ»: Նարեկացին հետևում է Քրիստոսին նաև այն բանում, երբ իրենն է համարում մարդկանց բոլոր հանցանքները. ինչպես Քրիստոսը «ամենայն հանցանքները մեր իրենը համարեց և իր վրա վերցրեց «մեր հաշտության փրկանակը», նույն կերպ էլ վարվում է բանաստեղծը: Սակայն Քրիստոսը անմեղ էր, անապական, իսկ մարդը մեղավոր է, ուստի մեղավորի գիտակցությամբ պիտի ընդունի «սկզբնահորից սկսած մինչև նրա ծննդի սերունդը վերջին, մարդկային ազգի ողջ չարիքների» պատասխանատվությունը:

Կեղծավորություն չէ՞ ձևանալ անմեղ, եթե նույնիսկ ճշմարիտ է, որ «չճանցա ու չպոռնկացա երբեք իմ կյանքում, ոչ էլ աշխարհիկ քաղցրությունների մահաբույր հաճույքն եւ ճաշակեցի»: Այսպիսի դիրքորոշումը, որը հիշեցնում է փարիսեցու խոսքը՝ «Գոհություն Աստծո, զի հարստացանք», նույնպես կարելի է անվանել անօրենություն: Թող ոչ ոք չպարծենա, թե ինքն անմեղ է կամ սուրբ կամ պատասխանատու չէ մարդկային չարիքների համար: Չկա մեկը, որ չկրի նախնական մեղագործության հետքը, չկա մեկը, որքան էլ նա լինի բարեպաշտ ու աստվածապաշտ, որ մասնակից չլինի չարիքին: Մարդկային բնությունն այնպիսին է, որ ի բնե հակված է չարիք գործելու: «Սխալական է մարդը մշտապես», ստեղծված է թերի, խակամիտ: «Չար է արարն, եւ ընդարոյս՝ չարութիւնն մեր», ուստի ոչ մի մարդ չի կարող մնացած լինել «անսխալական, անգայթ, անխտոր»:

Նարեկացին այլ կերպ է վարվում. պիտի ամեն ինչ խոստովանել, ոչինչ ծածուկ չպահել: Քանի որ ես ինձ հանձնել եմ ամենագիտակ Աստծո ատյանին, գրում

⁹ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն «Երգ երգոցի» Սողոմոնի, էջ 22:

է նա, ուրեմն չպիտի կեղծեմ, չպիտի ստեմ և «խաբեքայությամբ չեմ ջանա մտնել Նրա աչքը»: Ինքնադատ խոստովանությունը, ինքնադատապարտումը և ինքնաձաղկումը փրկության գրավականն են:

Մարդը ոչ միայն պետք է քողագեղծի սեփական մեղքերը, այլև իր վրա վերցնի համայն մարդկության կատարած, կատարվող և կատարվելիք հանցանքների պատասխանատվությունը: Նա, ով Ադամի սխալն իր անձին չի վերագրում, համայնի մեղքերն իրենը չի համարում, մեղանչում է արդարության դեմ և չի կարող մասնավել Բրիստոսին: Եթե մաքուր մարդ էլ կա, ապա գուցե դա հենց Բանաստեղծն է, որ, սակայն, հեռու է «այթաքումից» և, որպես մարդ, բնավ էլ իրեն անմեղ չի համարում: Ընդհակառակը, նա ձաղկումն սկսում է իրենից. որպես իր «անձին ամբաստանություն, վարժապետ անուն նույնիսկ» կրեց, կոչվեց ուսրբի՝ «եղծելով գովեստն առ Աստված», մարդկանցից վկայվեց սուրբ, երբ «անմաքուր» էր Աստծո առաջ, դիտվեց արդար ու բարի, երբ ամբարիշտ ու եղկելի էր բոլոր կողմերով, ավազանից կոչվեց արթուն (Գրիգոր), երբ ննջել էր մահաբեր քնով: Պարզվում է, որ նա է նախահայրը ամբարշտության, մեղավորների պետն ու անիրավների գլխավորը, պատժապարտների առաջնագույնը և հանցավորների հարազատ տիպարը:

Նարեկացին ինքն իր օրինակով ցույց է տալիս, որ մարդու աստվածացման ուղին համամարդ դառնալն է, սեփական անձի մեջ բոլոր մարդկանց մեղքերը ներառելն է, բոլորի կատարած չարիքների համար պատասխանատվություն ստանձնելն է.

Ո՛չ որ մեղաւոր իբրեւ զիս,
Ո՛չ որ անաւրէն, ո՛չ որ ամբարիշտ,
Ո՛չ որ անիրաւ, ո՛չ որ չարագործ,
Ո՛չ որ վրիպեալ, ո՛չ որ սխալեալ,
Ո՛չ որ մոլեգնեալ, ո՛չ որ խարդախեալ,
Ո՛չ որ շաղախեալ, ո՛չ որ ամաչեցեալ, ոչ որ դատապարտեալ,
Ե՛ս միայն, եւ յի՛ս ամենեցունն (էջ 535):

Միջնադարյան քրիստոնեական մտածողությունը աչքի է ընկնում համեստությամբ ու խոնարհությամբ: Ժամանակակից մարդու համար այդ համեստությունը կարող է անհասկանալի, ինչ-որ տեղ նաև նվաստացուցիչ լինել: Սակայն միջնադարյան մարդու համար ինքնաձաղկումը բոլորովին այլ արժեք և նշանակություն ունէր: Ինքնաձաղկումը նշանակում է դարձ առ Աստված, դա մաքրագործման ու բարոյական կատարելագործման սկիզբ է: Նարեկացին գրում է.

Քանզի, թէ չար է անէծս առնուլ յաւտարէ,
Ապա անձամբ զանձն անիծանել՝ կրկին չարաչար:
... Բայց թէ առ խոնարհութեան անձին իւրում մատնեսցի՝
Ջնեալ եւ կշտամբեալ անիծիք ի լեզուէ իւրմէ,
Ի խոստովանեալ եւ յամէնիշխան շրթանց բերանոյ
վերնոյն արհնեսցի,
Ջի ճշգրտեալ թարգմանեաց գդարձն իւր առ նա՝
Ջհետս կենացն ոչ լքանելով... (էջ 481):

Ինչպես նկատում է ռուս անվանի գիտնական Ս. Ավերինցևը, խոստովանական ինքնաձաղկումները և սեփական մեղքերի համար ողբերը միջնադարյան գրականության շատ արդյունավետ ժանրերից էին: Այս կարգի ստեղծագործությունները ելնում էին մի դիրքորոշումից, որը շատ հեռու էր ինքնաարտահայտվող անհատականության մասին ռոմանտիկական կամ հետոմանտիկական պատկերացումներից: «Երբ հեղինակը ասում է մեզ. «ես» տառապում եմ ու ողբում, «ես» մեղավոր եմ և ինքնաձաղկում եմ ինձ, նրա «ես»-ը պարտավոր է լինել այնպիսին, որ հեղինակին հավատակից ընթերցողը կամ ունկնդիրը կարողանա կրկնել նրա բո-

դրքն արդեն ի՛ր անունից՝ ամբողջությամբ և անվերապահորեն նույնացնելով իր «ես»-ը հեղինակային «ես»-ի հետ: Կրկնենք ևս մեկ անգամ - ամբողջությամբ և անվերապահորեն, քանի որ և ընկալման այն եղանակի մեջ, որը ռոմանտիզմից սկսած սովորաբար հաշվարկված է այսպես կոչված խոստովանական քնարերգության համար, ներառվում է ինքնանույնացման որոշ չափաբաժին՝ «ահա՛ և ե՛ս էլ եմ այդպիսին» բանաձևով, սակայն միավորված «և ե՛ս էլ եմ» առանձնացնող պաթոսի հետ, դա արդեն նշանակում է «նա չէ», «այդպիսին» արդեն նշանակում է «նույնը չէ»: Այսպիսի ինքնանույնացումը միջնադարյան տեքստում հնարավոր չէ: Դա նշանակում է, որ տեքստում կամ պետք է անհատական կենսագրության նշանները լինեն հաղթահարված կամ ընդհանրացվեն այն աստիճանի համամարդկային հարացույցներում, որում ամեն մի մանրամասն մշակված լինի որպես սիմվոլ: Այլապես չէր կարող տեղի ունենալ հավատացյալների համայնքի կողմից տեքստի յուրացումը: Այս ժանրը ձեռք է բերում վերանձնական բնույթ: Նարեկացին զոհաբերում է իր անհատականությունը, և այդ գործողությունը մոնումենտալ մի ժեստ է: Նա բառացիորեն ձեռքի հզոր շարժումով քանդում է «ես»-ի և «ոչ-ես»-ի միջև եղած միջնապատը, որպեսզի իր համար և բոլորի համար աղոթքը հնարավոր չլինի տարբերել¹⁰: Իսկապես, «Մատյանում» ոչ միայն ջնջվում է «Ես»-ի և «ոչ-ես»-ի միջև գոյություն ունեցող սահմանը, այլև Ես-ը նույնանում է «բոլորի» հետ, «Ես»-ը դառնում է «հանուր մարդկության ճշգրիտ տիպարն ու պատկերը»: Ինքնանույնացման այսպիսի աստիճանի շնորհիվ Նարեկացու «Մատյանը» վերածվում է մի Գրքի, որով ոչ միայն բոլոր մարդիկ միավորվում են, այլև, որպես հայելի, տեսնում են իրենց պատկերը:

«Մատյանը» իր բովանդակությամբ ու գաղափարական միտվածությամբ քրիստոնեական հումանիզմի մարմնացում է: Նարեկացին գրում է, թե երբեք ինքը չկարողացավ նշտապես դատել, թե երկրածիններից ո՞վ պիտի արդյոք արժանի դառնա Քրիստոսին ժառանգելու, որովհետև կյանքն ինքնին միանշանակ և միակերպ չէ. ազգավների մեջ տեսնում ենք ճերմակ աղավնիներ, գազանանման շների մեջ՝ մկիրյալ գառներ, դաժանության մեջ՝ բարեհոգություն, գոռոգության մեջ՝ հեզամըտություն, խարդախության մեջ՝ ուղղամտություն, չարիքների մեջ՝ բարեբաստություն, թշնամության մեջ՝ հաշտասիրություն և այլն: Բայց, չնայած այս երկմտանքին, նա համոզված է, որ բոլորը պիտի փրկվեն, որովհետև բոլորը Աստծուն են.

**Արդ, դու ստացար զամենեսեան, եւ քո են ամենեքեան,
Եւ ողորմիս ամենեցուն, միայն բարեգութ,
Զի թէ եւ մեղիցեն՝ վասն զի ի քում համարի են,
Քանզի գիտեն զգարութիւն քո... (էջ 372):**

Ոչ թե պետք է փրկվեն միայն ընտրյալները, այլ բոլորը: Պատահական չէ, որ նա «Մատյանը» հանձնարարում է բոլորին՝ անկախ նրանց ծագումից, ազգությունից, սեռից, դավանանքից ու սոցիալական դիրքից: Ելնելով մարդասիրական այս դիրքորոշումից՝ Նարեկացին պահանջում է, որ բոլորը պատասխան տան բոլորի համար, բոլորը մտածեն բոլորի փրկության մասին: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուրն իր վրա պետք է վերցնի բոլորի մեղքերը, Աստծու առաջ ներկայանա որպես «աղոթանվեր պատգամավոր» համայն մարդկության: Հետևելով Քրիստոսին՝ նա փրկություն է հայցում մարդկային ազգից նաև նրանց համար, ովքեր թշնամի են իրեն, ովքեր թունավորում են իր կյանքը, ովքեր բամբասում են սրբերին, խնդրում՝ «Ինձ խայթողներին մի՛ բնաջնջիր, այլ ուղի՛ր միայն»: Նարեկացին բոլորի հետ է՝ թե՛ մեղավորների և թե՛ արդարների: Իսկ «քանի որ նա «միասին» է միաժամանակ թե՛ մեկի և թե՛ մյուսի հետ, այդ երկուսի միավորումը տեղի է ունենում նրանում և նրա միջոցով. նա դառնում է միավորման խորհուրդ:

¹⁰ С. С. Аверинцев. Роскошь узора и глубины сердца: поэзия Григора Нарекаци. В кн.: Григор Нарекаци. Книга скорбных песнопений. М., 1988, с. 16-19.

Մարդիկ պետք է լինեն միասնական, որովհետև պոետն արդեն միասնական է բուրի հետ»¹¹: Որպեսզի վերջ տրվի հոգևոր անիշխանությանն ու գոտույթյանը, որպեսզի բոլորը, հատկապես հակամարտության մեջ գտնվող մարդիկ, միավորվեն, մոռանան միմյանց հասցրած վիրավորանքներն ու մեղադրանքները, պետք է վերափոխվեն, փոխեն իրենց կենսադիրքորոշումները: Բոլորը պետք է ընդունեն, որ մեղավոր են, ընդամիս, յուրաքանչյուրն իր վրա պետք է վերցնի բոլորի մեղքերը, պատասխանատու լինի բոլորի համար: Բոլորը պետք է ընդունեն, որ իրենց փրկության գրավականը հավատն է առ Քրիստոս Աստված, որի համար բոլորը հավասար են, եթե անկեղծորեն հավատում են Նրան: Բոլորը պետք է ապրեն քրիստոսաբար, դառնան երկրային աստվածներ, որպեսզի կարողանան միաձուլվել Քրիստոս Աստծու հետ: Յուրաքանչյուր մարդ պետք է գործի այդ սխրանքը: Ահա այն երկրային Կտակը, որ Նարեկացին ավանդել է մարդկությանը՝ ինքն էլ դառնալով համամարդկային այդ սխրանքի խորհրդանշանը:

Գրականագետ Լևոն Մկրտչյանին հղած նամակներից մեկում նշանավոր գրող Չինգիզ Այթմատովը իրավացիորեն նկատել է. «Մեզ համար Նարեկացին «սարսափելի» է իր աներևակայելի մաքսիմալիզմով, Աստծո առջև պատասխանատվության, խղճի դատաստանին՝ բարձրագույն ու հավերժական ատյանին, ինքն իրեն անողորմ ենթարկելու գերմարդկային ընդունակությամբ»¹²: Իսկապես, Նարեկացու աներևակայելի բարոյական մաքսիմալիզմը, որը հայի հոգեկերտվածքի բնորոշ գծերից է, մարդու առջև դնում է անկարելի կարելի դարձնելու խնդիր. մարդը պետք է, ինքն իրեն հաղթահարելով, ինքն իրեն բարձրացնելով, համամարդ դառնալով՝ հասնի աստվածայինի բարձունքին:

«Մատյանի» գրվելուց հետո անցել է հազարամյակ, սակայն մարդու փրկության համար Նարեկացու բարձրացած ահագանգը այսօր էլ աղաղակում է ինչպես անլուելի գանգակատուն: Ժամանակի ընթացքում անել են մարդու հպարտության թևերը՝ սովերի տակ թողնելով նրա խիղճն ու Սիրտը, աղավաղվող և խեղաթյուրվող բարոյական դեմքը: Չարիքները չեն պակասել, այլ, ընդհակառակը, ավելացել են: Մարդը ոչ միայն չի աստվածացել, այլև կորցրել է մարդկային շատ առաքինություններ: Ժարունակվում է նրա անկումը, սակայն «մեռանիմք, եւ ոչ զարհուրիմք, կորնչիմք, եւ ոչ հիանամք, եղծանիմք, եւ ոչ զղջանամք»... Եվ ո՞ր է գնում մարդկությունն այսպես եռանդով: Ո՞ւմ համար են դողանջում «հավիտեական անեղծ հուշարձանի» ի խորոց սրտի բխած և մարդկությանը Դարձի կանչող անլուելի գանգերը...

С. А. ЗАКАРЯН - Подвиг Нарекаци. - В статье выдвигается положение о том, что в "Книге скорби" Григор Нарекаци по-новому осмысливает вопрос спасения человека. Сын Бога, Христос, явился в этот мир и пожертвовал собою ради спасения человека, однако человек продолжал жить по-старому, даже "позабыл благодеяния Спасителя", повернулся к нему "не лицом, а спиной".

Для спасения человека требуется новое, но уже человеческое деяние. На сошествие Бога к человеку необходимо ответить восхождением человека к Богу, то есть совершить подвиг.

Гуманизм Нарекаци проявляется в том, что для него человек не является безнадежно падшим грешником, участь которого заранее предопределена, а, наоборот, созданием, которое, веруя в Бога и стремясь к совершенству, может стать богоподобным.

¹¹ Նույն տեղում, էջ 20:

¹² Լ. Մկրտչյան, Մեր բարեկամ Չինգիզ Այթմատովը, «Սովետական Հայաստան», 1982, № 10, էջ 9: